

«ԲԺՇԿԱՐԱՆ ՁԻՈՅ ԵՒ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԳՐԱՍՏՆՈՅ (ԺԳ դար)», աշխատասիրություններ Բ. Լ. Չուգասյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1980, 272 էջ:

Հայագիտական գրականությունը համարվեց մի ուշագրավ բնագրով, որը վերաբերում է միջնադարյան Հայաստանում բավական զարգացած, կարևոր բնագավառի՝ անասնաբուծությանը, մասնավորապես ձիաբուծությանը: Գիրքը հրատարակել է Մաշտոցի անվան Մատենադարանը՝ աշխատասիրությամբ բանասիրական գիտությունների թեկնածու Բ. Լ. Չուգասյանի: Այս հետաքրքիր հրատարակության հիմքում ընկած է XIII դ. հայերեն մի ձեռագիր, Հուշարձանի առայժմ մեզ հասած միակ օրինակը, որը զարասկղբին ծանոթ էր Հ. Աճառյանին և նկարագրվել էր նրա կողմից, վերջին տարիներս վերստին հայտնվեց՝ շնորհիվ աշխատասիրողի անխոչընդոտ քննարկի:

Գիրքը բաղկացած է ներածությունից, բնագրից (ձեռագրից վերադրված մի քանի նկարներով), հավելվածից, մատենակից բառարանից, ունի ռուսերեն ամփոփում, բնագրում հիշատակվող հիվանդությունների և դեղերի ցանկեր:

Ներածության մեջ (էջ 5—34) հաղորդվում է, որ Բժշկարանի 1906 թ. Թավրիզում Հ. Աճառյանի նկարագրած ձեռագիրը, որը մինչև 1971 թ. կորած էր համարվում, գտնվում է Նու Անշևու քաղաքի բնակիչ Ջարեհ Սարաջյանի մոտ, բարձր զինակում: 1972 թ. աշխատասիրողը տեսել է այդ ձեռագիրը և ստացել նրա մանրամասնագրեր, որի հիման վրա էլ կատարել է բնագրի հրատարակման իր շնորհակալ աշխատանքը: Այնուհետև արծարծվում են հին և միջնադարյան Հայաստանում ձիաբուծության պատմության, հայ մատենագրության մեջ դրա արտացոլման, Բժշկարանի ստեղծման, բուժանդակության, նշանակության, լեզվի և այլ հանգուցային հարցեր. «Հայկական բարձրավանդակում ժին հայտնի է եղել հին ժամանակներից» (էջ 6), «Եվս մ. թ. ա. առաջին հազարամյակում Հայաստանն արդեն հռչակված էր իր աղնվադեղ ձիերով և գրաստներով, ձիաբուծությունը երկրի տնտեսության հիմնական ճյուղերից էր» (էջ 7):

Հայ հեղինակների ձիաբուծական ու ձիաբուծական ինքնուրույն աշխատությունների առայժմ հայտնի չեն (տե՛ս էջ 13): Հայերեն ձեռագրերով պահպանված «Վասն ձիոյ ազգաց...», «Վասն ձիոյ պայթարման», «Եր ցրաստու թժշկարանէն փոխած», «Բժշկարան ձիոյ և առհասարակ ցրաստոյ»-ը Թարգմանական գործեր են: Վերջինիս մի լեզուորյնակությունը կամ խմբագրությունը հավանաբար հիմք է հանդիսացել վրացական Թարգմանության համար (տե՛ս էջ 19):

«Բժշկարան ձիոյ եւ առհասարակ ցրաստոյ» երկը կազմել է ասորի Բժիշկ Յարազը՝ ձեռագրի գրիչ Քորոս քահանայի օժանդակությամբ: Բժշկարանը արաբական որոշակի բնագրի հարազատ Թարգմանություն չէ, այլ, ինչպես ցույց է տալիս աշխատասիրողը, այն պարզ ու համառոտ մի ձեռնարկ է՝ կազմված տարբեր աղբյուրների օգտագործումով, դրանց ռեմանուկությամբ, բայց ոչ այդ ձեռնարկների բարդությամբ ու մանրամասնությամբ...» (էջ 23—24):

Հայ բանասիրության համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում բնագրի լեզուն, որը հարուստ է բազմաթիվ նոր բառերով, բառաբարդություններով ու անասնաբուծական տերմիններով: Ներածության մեջ, լեզվի հարցերին նվիրված հատկանշալի, Բժշկարանի իր լեզվական առաջնությունը համահունչ է համարվում կրիկյան շրջանի հանրահայտ գրավոր հուշարձանների (Ռատաստանագիրք, Ռևսիդդ Անտիօքյան, Փենոթիկոն բուժեման մարդոյ և նորին ցուցոյ, «Գիրք վաստակոց և այլն») հետ և «...թննարկվում է որպես միջին հայերենի հուշարձան» (էջ 26): Մասնավորապես նշվում է, որ ձեռնարկի բնագրում գործածված հայերեն բառարարությունների, օտար և հայերեն բաղադրյալներով կազմված բառերի և արաբական փոխառությունների մի մասը, «...հատկապես իրանական ձևերը, վաղուց ի վեր գործածական են եղել խոսակցական լեզվում, սակայն չեն գրանցվել մեր մատենագրության մեջ» (էջ 28): Հպանցիկ խոսվում է նաև դեղաբույսերի, շափի ու կշոփ անունների և բնագրի ուղղագրության մասին, սակայն ուշադրության կենտրոնում բառապաշարն է: Վերոհիշյալ հարցերի շուրջը, կարծում ենք, հարկ կար ծավալվելու՝ ի ցույց դնելով լեզվական, մասնավորապես՝ նշանակալի

այն հետաքրքիր երևույթները, որոնք իրոք ... հարստացնում են մեր գիտելիքները միջին հա-
յերենի վերաբերյալ...» (էջ 29)։ Այնուհետև տրվում է Բժշկարանի միակ ձեռագրի մանրա-
մասն մատենագիտական նկարագրությունը։

Բժշկարանի ընագիրը (էջ 35—163) սկսվում է ճանկ գլխոցով, որն ընդհանուր պատ-
կերացում է տալիս ինչպես առանձին գլուխների, այնպես էլ ամբողջ աշխատության բովան-
դակության մասին։

Աշխատության գլուխները մեծ մասամբ ծավալուն չեն, երբեմն բաղկացած են ընդամենը
մի քանի տողից, շարադրանքը համառոտ է ու պարզ։ Հիվանդություններին և դրանց բուժմանը
վերաբերող գլուխները ներկայացված են որոշակի սկզբունքով։ Նախ տրվում են իվանդու-
թյան ախտանշանները, խոսվում է դրանց հարուցիչների ու առաջացման պատճառների մասին,
ապա նկարագրվում են բուժման ընթացակարգը (պրոցեդուրա), զեղերի պատրաստման և օգ-
տագործման եղանակները։ Ուտի, գլուխների ախտորոշման և բուժման բաժինները սկսվում են
«նշանքն է», «նշանքն այս է», «Բժշկութիւնն է», «Բժշկութիւնն այս է» և նման եմբովերանգրե-
րով։ Դեղամիջոցների պատրաստման համար նշվում են դեղաբույսերը, օրգանական և անօր-
գանական մյուս նյութերը, ինչպես նաև դրանց կշիռը, չափը, ֆիզիկական վիճակը, պատ-
րաստման և գործածության ժամանակը և այլ պարագաներ (նույնի, մթխալ, չիտը, դանկ, թուղթ,
դրամ, հատ, ճանկ, մասն, բաժին, անապակ, չոր, պինդ, բարակ, շող, մանդը, օր, շարաք,
գիշեր և այլն)։ Միևնույն հիվանդության բուժման համար հաճախ, առաջին զեղից հետո,
«Այլ զեղ» նշումով, առաջարկվում են մի շարք ուրիշ զեղեր։ Նկարագրություններից ու հրա-
հանգներից բացի, հեղինակը գիտողություններ է անում, խորհուրդներ տալիս, երբեմն վկա-
յակոչում է ուրիշ բժիշկների կարծիքները։

Գրախոսվող աշխատությունը համեմատական ընագիր չէ, այլ եզակի ձեռագրի տպագիր
վերարտադրություն (մանրաժապավենից)։ Նման ընագրի նրատարակությունն իր հանգամանա-
կներն ունի։ Եթե աշխատանքը հնչու է ծավալի առումով, ապա դժվար է ու բարդ ընագիրը թե՛
բովանդակությամբ և թե՛ լեզվով ու ուղղագրությամբ ճիշտ ու հարազատորեն վերարտադրելու
տեսակետից։ Աղավաղումների, աղճատումների, ձեռագրի վնասված տեղերի, զրազրական
սխալների և բաղմամբիլ այլ թերությունների վերացման և նախօրինակի ճիշտ վերականգնման
համար պահանջվում է ոչ միայն իմացություն, այլև բանասիրական աշխատանքի փորձ ու
հմտություն։ Բարեբախտաբար Բժշկարանն ընկել է կարող ձեռք. աշխատասիրողը հաղթահա-
րել է ընագրին հատուկ գիտական ու բանասիրական ընույթի բոլոր դժվարությունները։ Այն
ներկայացված է անհրաժեշտ վերականգնումներով, ուղղումներով, համապատասխան ծանու-
ցումներով ու բացատրություններով, որոնք կատարված են մշակված սկզբունքով ու բարենպաստ-
ությամբ։ Միաժամանակ նշենք, որ աշխտամենայնիվ կան ընդարձակական գիտողությունների
արժանի երևույթներ, խոթի (=խութի), տաֆույի (=տարֆայի) և այլ բառերի դիմաց փա-
կագծերում առնված ձևերն ափսոսաբար չեն չափազանցվում, իսկ հայերեն մեծատառերով
արտահայտված թվերի դիմաց հարկ չկար փակագծերով տալու համապատասխան արաբական
թվանշանները։

Աշխատասիրողը ճիշտ է վարվել հրաժարվելով ընագրի ուղղագրությունը միօրինակելուց։
Եվ ընագիր թե՛ կարելի լինել հաստատել ու կիրառել ուղղագրական որոշակի կանոն (նորմա)
մի ընագրի համար, որի մեջ բառերի զրազրական անկանոնությունը, այլև արտասանական
հանգամանքներով պայմանավորված զանազան տարաձևերը զրազրում են։ Բնագիրը, մաս-
նավոր միջամտություններով՝ անդերձ, ընթերցողին ներկայանում է իր գրության նախնական
վիճակով և այդպես ավելի հետաքրքիր ու ակնառու է միևնույն հայերենով զրազրողների համար։
Ուղղված են զրազրական վրիպակները, էջատակում նշված են կրկնությունները, հետագա
փոփոխությունները, որոնք, բարեբախտաբար, սակավաթիվ են։ Անենք նաև, որ աշխատա-
սիրողի որոշ ավելացումներ կարեւորություն չունեն, ինչպես, որինակ, քվիլոյիլն բառի վեր-
ջում, նաև այլ բառերի մեջ, հ-ի ավելացումը, երբ զրիչը մեծ մասամբ գրում է բվիլոյիլն (է),
ինչ իր լեզվական մեկնությամբ և ձեռագրի վերարտադրության սկզբունքով մերժելի չէ և նույ-
նությամբ պետք է մնար տպագրի օրինակում։

Հայագետը ընագրին առընթեր կազմել է բառարան (էջ 170—250) ռիբիլն հայերենի բա-
ռագանձի ուսումնասիրությանը նպաստելու, ինչպես նաև նրա տարակից նուշարձան ընթեր-
ցողներին մատչելի և հասկանալի դարձնելու համար» (էջ 170)։ Իրականում բառարանի նշա-
նակությունն ավելի մեծ է, այն բովանդակալից ու մասնագիտական բարձր մահարդակով կա-
տարված գիտական աշխատություն է, որն ավելի է իմաստավորում հուշարձանը և մեծապես
բարձրացնում հրատարակության արժեքը։ Բացատրական և ստուգաբանական ընույթ ունեցող

այդ բառարանը պարունակում է ավելի քան 900 զլիարատ, ընդ որում՝ մեր բառարաններին անծանոթ բառարարություններ, նորահայտ փոխառյալ բառեր, Բժշկարանով նազույն վկայություն ունեցող բառեր, միջին հայերենի գրավոր նուշարձաններում պահպանված հազվագյուտ բառեր, բառերի բարբառային տարբերակներ, բառարաններում անստույգ համարված կամ ոչ ճիշտ ստուգարանված մի շարք բառեր (տե՛ս էջ 170), Բառարանում մեկնությունները և ստուգարանությունները կատարված են զիտական պատշաճ մակարդակով՝ լիզվական իրենություններին ու փաստերին մանրամասն, բազմակողմանի ու անաչառ համեմատական քննությամբ: Բառահոգվածները հարուստ են օրինակներով, քաղվածքներով, վկայակոչումներով, տառադարձական ու նյութնարանական քննության հետաքրքիր դիտողություններով, մատենագիտական տեղեկություններով և աչքի են ընկնում նյութի բառարանագրական մշակման արվեստով (տե՛ս արմուշի, բահրակ, գորգզան, զուռն, երկոթ, ըոթէպ, թմբընդի, խոլխի, կասայ, ճարատ, մազերան, մատեն, նթթէպ, պյուզ, ջոզ, ոսյֆիմէ, սանզալ, սպունկզուռ, ֆառայ և այլն): Սակայն բառարանի մեջ կան առանձին անստույգ կամ խմատով լրիվ չպարզարանված բառեր (աղիուրթ, նանեյ, ճանփ, յազար, թաղթփի, շայթեհ, սայլևառ, տարնշթայթ, տուպիա, փաղցա, քուռճայ և այլն), ոչ դիպուկ սահմանումներ (թութ, խոյաթիթ և այլն), ինչպես նաև վրիպումներ. որոնք անխուսափելի են նման բարդ ու աշխատատար գործերում:

Գիրքն ընթերցողներին լայն շրջաններին առայժմ ներկայանում է հուսերեն ամփոփումով (էջ 250—260): Ցանկալի է, որ Բժշկարանը լույս ընծայվի նաև ոռոսերեն լեզվով, որովհետև այն իր նշանակությամբ դուրս է գալիս ազգային մշակույթի սահմաններից և այսօր էլ դուրկ չէ հետաքրքրությունից թե՛ գիտական և թե՛ գործնական առումով: Աշխատասիրողն իրավամբ գրում է. «Անասնաբուծության զարգացման ներկա ժամանակաշրջանում, երբ մեծ ուշադրություն է դարձվում անցյալի փորձին, միջնադարյան ու ժողովրդական բժշկությունը, անկասկած հետաքրքրություն կարող են ներկայացնել նաև հայկական միջնադարյան բժշկական ձեռնարկները՝ լինեն դրանք թարգմանական թե՛ ինքնուրույն» (էջ 26):

Նշենք, նաև որ ըստ ամենայնի հաջողված ու արժեքավոր այս աշխատասիրությունը խմբագրված է խնամքով ու քարեխղճությամբ, ձևավորված և հրատարակված է տպագրական պատշաճ մակարդակով:

ՀԱՅԿ ԱՄԱՆԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր